ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋև ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՆՈՐ ԷՆԵՐԳԱԲԼՈԿՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ Հայկական կողմ) և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը (այսուհետ՝ Ռուսական կողմ), անվանվելով նաև Կողմեր,

հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը հանդիսանում են Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անդամներ և «Միջուկային զենքի չտարածման մասին» 1968 թվականի հուլիսի 1-ի համաձայնագրի, «Միջուկային վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին» 1963 թվականի մայիսի 21-ի Վիեննայի կոնվենցիայի, «Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» 1979 թվականի հոկտեմբերի 26-ի կոնվենցիայի, «Միջուկային վթարի օպերատիվ տեղեկացման մասին» 1986 թվականի սեպտեմբերի 26-ի կոնվենցիայի, «Միջուկային անվտանգության մասին» 1994 թվականի հուլիսի 17-ի կոնվենցիայի մասնակիցներ,

նպատակ ունենալով բարձրացնելու խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում համագործակցության արդյունավետությունը «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման ոլորտում համագործակցության մասին» 2000 թվականի սեպտեմբերի 25-ի համաձայնագրի հիման վրա,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

1. Կողմերն իրենց լիազորված կազմակերպությունների միջոցով համագործակցում են Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԷԿ-92 նախագծի՝ 1060 ՄՎտ հզորությամբ, 60 տարի շահագործման ժամկետով, Եվրոպական շահագործող կազմակերպությունների ակումբի չափանիշներին համապատասխան սերտիֆիկացված (սերտիֆիկատ 2007, ապրիլի 24) ջրաջրային էներգետիկ ռեակտորներով ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների կառուցման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) իրականացման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված համագործակցությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

անհրաժեշտ լիցենզիաների և թույլտվությունների ստացման նպատակով մի շարք նախանախագծային աշխատանքների իրականացում.

ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների նախագծում.

ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների ռեակտորային բաժանմունքի մասնաշենքում և ռեակտորային բաժանմունքի օժանդակ մասնաշենքերում տեղակայվող սարքավորումների, համակարգերի, մոնտաժային, հսկիչ և այլ տեխնիկական միջոցների, ինչպես նաև այլ սարքավորումների (ներառյալ դրանց մոնտաժումը) մատակարարում.

ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների և Նախագծի իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի կառուցում.

ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների գործարկման-կարգաբերման աշխատանքներ և շահագործման հանձնում.

անձնակազմի ուսուցում.

տեխնիկական աջակցություն ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների ֆիզիկական պաշտպանության կազմակերպմանը.

ռուսական արտադրության թարմ միջուկային վառելիքի մատակարարում ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների համար շահագործման ամբողջ ընթացքում.

տեխնիկական աջակցության տրամադրում ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների շահագործման ընթացքում.

տեխնիկական աջակցության տրամադրում Հայաստանի Հանրապետության՝ միջուկային անվտանգության բնագավառում հսկողություն (վերահսկողություն) իրականացնող կարգավորող մարմնին.

աշխատած միջուկային վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարում.

ատոմային էլեկտրակայանի էներգաբլոկների շահագործումից հանում:

3. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված համագործակցության ուղղությունները վերջնական չեն, Կողմերը համագործակցության ծավալը և այլ ուղղությունները որոշում են Նախագծի իրականացման ընթացքում:

4. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված կոնկրետ ուղղություններով համագործակցության իրականացումը կատարվելու է Կողմերի լիազորված կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա (հետագայում՝ Պայմանագրեր):

Պայմանագրերը կազմվում են Ինժեներ խորհրդատուների միջազգային ֆեդերացիայի որոշած՝ հաստատագրված գներով սարքավորումների մատակարարումների և ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի պայմաններին, ինչպես նաև Կողմերի լիազորված կազմակերպությունների միջև համաձայնեցված այլ պայմաններին համապատասխան:

5. Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է Կողմերի պետությունների օրենսդրություններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության մասնակցությամբ միջազգային պայմանագրերին համապատասխան՝ հաշվի առնելով միջուկային ու ճառագայթային անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ միջազգային հանրաճանաչ սկզբունքները և հանձնարարական-առաջարկությունները:

Հոդված 2

1. Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերը նշանակում են հետևյալ իրավասու մարմինները՝

Հայկական կողմից - Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն.

Ռուսական կողմից - Ատոմային էներգիայի պետական կորպորացիա, Ռոսատոմ:

2. Սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող գործունեության համակարգման և հսկողության համար Կողմերի իրավասու մարմիններն ստեղծում են համատեղ Համակարգման կոմիտե:

Համակարգման կոմիտեի կազմը և գործունեության կարգը որոշվում են Կողմերի իրավասու մարմինների կողմից: Համակարգման կոմիտեի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում են Կողմերի իրավասու մարմինների կողմից նշանակված համանախագահները, որոնք օժտված են հավասար լիազորություններով:

3. Սույն Համաձայնագրի իրականացման համար Կողմերի իրավասու մարմիններից յուրաքանչյուրը նշանակում է լիազորված կազմակերպություն:

4. Կողմերի լիազորված կազմակերպություններն իրավասու են սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցության իրականացման շրջանակներում հայկական, ռուսական և արտասահմանյան ընկերությունների հետ պայմանագրեր կնքել ապրանքների մատակարարման, աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման համար:

Ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկները շահագործման հանձնելու ժամկետները որոշվում են Նախագծի իրականացման պայմանագրում:

Հոդված 3

1. Ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների, ինչպես նաև դրանց արտադրած էլեկտրաէներգիայի պատվիրատուն և սեփականատերն է «Մեծամորէներգոատոմ» փակ բաժնետիրական ընկերությունը, իսկ գլխավոր կապալառուն՝ «Ատոմստրոյէքսպորտ» փակ բաժնետիրական ընկերությունը: Ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների հիմնական սարքավորումներն արտադրողների, կառուցվածքի և կոնֆիգուրացիայի, ինչպես նաև շինարարամոնտաժային աշխատանքներ կատարողների ընտրությունը համաձայնեցվում է Հայկական կողմի հետ:

2. Ռուսական կողմը համաձայն է, որ «Ուորլի պարսոնզ յուրոպ էներջի սերվիսիզ լիմիտիդ» («Worley Parsons Eurupe Energy Services Limited») ընկերությունը հանդիսանում է Նախագծի իրականացման մասնակից՝ համաձայն 2009 թ. մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության պետական գնումների գործակալության հետ կնքված հմ. ԾՁԲ-09/22 պայմանագրի:

3. Կողմերն իրենց Լիազորված կազմակերպությունների միջոցով ապահովում են «Մեծամորէներգոատոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Նախագծի իրականացման համար ներդրումներ ներգրավելու համար անհրաժեշտ պայմանների ձևավորումը:

4. Կողմերն իրենց Լիազորված կազմակերպությունների միջոցով ապահովում են նոր ներդրողների ներգրավումը Նախագծի իրականացման համար ինչպես բաժնետերերի միջև համաձայնեցված կարգով «Մեծամորէներգոատոմ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում մասնաբաժինների փոփոխության, այնպես էլ փոխառվող դրամական միջոցների ներգրավման միջոցով:

Հոդված 4

1. Սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցության իրականացման նպատակով՝ Հայկական կողմն ապահովում է.

ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծում.

ատոմային էլեկտրակայանի էներգաբլոկների կառուցման համար ընտրված, բայց վերահաստատման ենթակա հրապարակի և նախկինում կատարված նախապատրաստական և նախանախագծային աշխատանքների արդյունքների վերաբերյալ տվյալների ժամանակին տրամադրումը «Մեծամորէներգոատոմ» փակ բաժնետիրական ընկերությանը, ինչպես նաև ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների կառուցման համար հրապարակի տրամադրումը նշված բաժնետիրական ընկերությանը.

ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների կառուցման համար անհրաժեշտ՝ նախագծման, շինարարության և շահագործման համար թույլտվությունների (լիցենզիաների) ստացում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության.

ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկներից յուրաքանչյուրի կողմից արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի ձեռքբերում «Մեծամորէներգոատոմ» փակ բաժնետիրական ընկերությունից այնպիսի պայմաններով, որը կապահովի այդ էներգաբլոկում էլեկտրաէներգիայի արտադրությունն սկսվելու փաստացի օրվանից 20 տարվա ընթացքում դրա կառուցման համար պահանջվող ներդրումների ամբողջական ծախսածածկումը.

ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի անընդհատ վաճառքի համար պահանջվող անհրաժեշտ ցանցային ենթակառուցվածքի ստեղծում.

«Մեծամորէներգոատոմ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրական կապիտալում գույքային ներդրման կատարում՝ հողատարածքի, ենթակառուցվածքի օբյեկտների տեսքով և այլ ձևերով, որի դրամական արժեքը կորոշվի Կողմերի լիազորված կազմակերպությունների միջև համաձայնեցված պայմաններով:

2. Սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցության իրականացման նպատակով Ռուսական կողմն ապահովում է.

Նախագծի իրականացման համար ներդրումներ այն ծավալով, որն անհրաժեշտ կլինի ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների կառուցման նպատակով Կողմերի ստանձնած պարտավորությունների կատարման համար: Ընդ որում՝ Նախագծի՝ Ռուսական կողմի մասնակիցների ներդրումների չափը Նախագծի իրականացման ընդհանուր արժեքում պետք է լինի ոչ պակաս, քան «Մեծամորէներգոատոմ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրական կապիտալում ռուսական կազմակերպությունների մասնաբաժինը.

ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների ռեակտորային բաժանմունքի մասնաշենքում և ռեակտորային բաժանմունքի օժանդակ մասնաշենքերում տեղակայվող սարքավորումների, համակարգերի,

մանտաժային, հսկիչ և այլ տեխնիկական միջոցների պահուստավորում՝ ըստ «Մեծամորէներգոատոմ» փակ բաժնետիրական ընկերության հետ համաձայնեցված ցանկի.

տեխնիկական և այլ առաջարկների ներկայացում Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հանձնարարական-առաջարկություններին և Հայաստանի օրենսդրության պահանջներին համապատասխան.

ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների կառուցման համար լրացուցիչ ֆինանսավորման հարցերի քննարկում Հայկական կողմից համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում՝ Կողմերի միջև առանձին համաձայնագրով որոշվող պայմաններով:

3. Կողմերի լիազորված կազմակերպություններն ապահովում են Նախագծի իրականացումն սկսելու համար անհրաժեշտ ծավալով ներդրումները՝ «Մեծամորէներգոատոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից հրապարակի ընտրության համար անհրաժեշտ թույլտվությունները ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում:

4. Շահագործմանն առնչվող հարցերը կարգավորվում են Կողմերի լիազորված կազմակերպությունների միջև՝ առանձին համաձայնագրով:

Հոդված 5

Սույն Համաձայնագրով նախատեսված գործունեության իրականացման ընթացքում հարկերի և գանձումների (տուրքերի) վճարումը կատարվում է Կողմերի պետությունների օրենսդրություններին և «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը վերացնելու մասին» 1996 թվականի դեկտեմբերի 28-ի համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Հոդված 6

1. Սույն Համաձայնագրին համապատասխան կառուցված ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների շահագործման ամբողջ ժամանակահատվածում օգտագործվում է Ռուսաստանի Դաշնությունում արտադրված միջուկային վառելիք՝ պատրաստի ջերմանջատիչ հավաքածքների տեսքով և այն ծավալով, որն անհրաժեշտ է էներգաբլոկների սկզբնական բեռնավորման և հետագա բոլոր վերաբեռնավորումների համար:

Ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների շահագործման երաշխիքային ժամանակահատվածի ավարտից հետո՝ շահագործման ամբողջ ժամանակահատվածում, միջուկային վառելիքի մատակարարումն իրականացվում է ռուսական մատակարարների կողմից՝ հիմք ընդունելով «Մեծամորէներգոատոմ» փակ բաժնետիրական ընկերության և Ռուսական կողմի իրավասու մարմնի կողմից լիազորված կազմակերպության միջև կնքված երկարաժամկետ պայմանագրերը:

2. Ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների ռեակտորում աշխատած՝ ռուսական արտադրության միջուկային վառելիքը կարող է վերամշակվել Ռուսաստանի Դաշնությունում՝ Կողմերի միջև կնքված առանձին համաձայնագրով որոշվող պայմաններով:

Հոդված 7

1. Կողմերը ձեռնարկում են իրենց պետությունների օրենսդրությամբ նախատեսված բոլոր անհրաժեշտ միջոցները մտավոր սեփականության պաշտպանության համար, ներառյալ արտադրության գաղտնիքները (նոու-հաու), որոնք փոխանակում են հայկական և ռուսական կազմակերպությունները սույն Համաձայնագրի կատարման ընթացքում:

2. Մտավոր սեփականության իրավական պաշտպանության և իրավունքի բաշխման հարցերը, որոնք փոխանցվում կամ ստեղծվում են Կողմերի կազմակերպությունների կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ընթացքում, կարգավորվում և որոշվում են ըստ Կողմերի պետությունների օրենսդրությունների: Սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցության շրջանակներում տեխնիկական որոշումների և մտավոր սեփականության օբյեկտի մասին տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի փոխանցումը չի բերի այդ որոշումների և օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքների զիջում (օտարում), եթե համապատասխան հայկական և ռուսական կազմակերպությունների միջև, Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան, կնքված պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

3. Կողմերի կազմակերպությունների համատեղ ստեղծած մտավոր գործունեության ցանկացած արդյունքի, դրա նկատմամբ իրավունքների տնօրինման և դրանց օգտագործման պայմանների կարգը պետք է լինի Կողմերի միջև գրավոր համաձայնության առարկա: Մինչև նման համաձայնագրի ստորագրումը, մտավոր գործունեության արդյունքները, որոնք Կողմերի կազմակերպությունների կողմից ստեղծվել են համատեղ, օգտագործվում են բացառապես սույն Համաձայնագրի նպատակների համար, և Կողմերի կազմակերպություններից ոչ մեկը դրանք տնօրինելու և օգտագործելու ինքնուրույն իրավունք չունի:

4. Սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացված համատեղ մշակումների մասին ցանկացած տեղեկատվություն չի կարող փոխանցվել երրորդ կողմի՝ առանց Կողմերի իրավասու մարմինների նախնական գրավոր համաձայնության:

5. Սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում Կողմերի կազմակերպություններից որևէ մեկի կողմից ինքնուրույն ստեղծված մտավոր գործունեության արդյունքի նկատմամբ իրավունքը պատկանում է տվյալ Կողմին:

Հոդված 8

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում չի իրականացվում Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիք և Ռուսաստանի Դաշնության պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության փոխանցում:

2. Սույն Համաձայնագրի շրջանակներում չի իրականացվում այնպիսի տեղեկատվության փոխանցում, որի փոխանցումն արգելված է Կողմերի պետությունների օրենսդրությամբ, կամ դրանց փոխանցումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության մասնակցությամբ միջազգային պայմանագրերին: Սույն Համաձայնագրի շրջանակներում փոխանցված կամ դրա կատարման արդյունքում ստեղծված ամբողջ տեղեկատվությունը չի բացահայտվում կամ չի փոխանցվում երրորդ կողմի՝ առանց երկու Կողմերի նախնական գրավոր համաձայնության:

3. Սույն Համաձայնագրի շրջանակներում փոխանցվող կամ դրա կատարման ընթացքում ստեղծվող և Հայկական կողմից ծառայողական գաղտնիք համարվող տեղեկատվությունը կամ Ռուսական կողմից սահմանափակ տարածմամբ ծառայողական տեղեկատվություն համարվող տեղեկատվությունը հստակ որոշվում և նշվում են որպես այդպիսին:

Այն փաստաթղթերը, որոնք պարունակում են տեղեկատվություն, որը Հայկական կողմը համարում է որպես սահմանափակ տարածմամբ տեղեկատվություն, պետք է ունենան «Ծառայողական գաղտնիք» նշումը:

Այն փաստաթղթերը, որոնք պարունակում են տեղեկատվություն, որը Ռուսական կողմը համարում է որպես սահմանափակ տարածմամբ ծառայողական տեղեկատվություն, պետք է ունենան «Ծառայողական օգտագործման համար» նշումը:

Կողմերը առավելագույնս սահմանափակում են այն մարդկանց շրջանակը, որոնց համար մատչելի է այդ տեղեկատվությունը, և ապահովում են դրա օգտագործումը միայն սույն Համաձայնագրով նախատեսված նպատակների համար:

Այդպիսի տեղեկատվությունը չի բացահայտվում և չի փոխանցվում երրորդ կողմի:

Հայաստանի Հանրապետությունում նման տեղեկատվության հետ վարվում են այնպես, ինչպես ծառայողական գաղտնիք համարվող տեղեկատվության հետ, իսկ Ռուսաստանի Դաշնությունում՝ ինչպես սահմանափակ տարածմամբ ծառայողական տեղեկատվության հետ:

Այդպիսի տեղեկատվությունը ապահովվում է պաշտպանությամբ՝ Կողմերի պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն:

4. Կողմերի միջև տեղեկատվության փոխանակման կանոնները և ծավալը որոշվում են յուրաքանչյուր առանձին դեպքի համար՝ համաձայն Կողմերի պետությունների օրենսդրության:

Հոդված 9

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում միջուկային նյութերի, սարքավորումների, ոչ միջուկային հատուկ նյութերի և համապատասխան տեխնոլոգիաների արտահանումն իրականացվում է համաձայն Կողմերի պարտավորությունների, որոնք բխում են «Միջուկային զենքի չտարածման մասին» 1968 թվականի հուլիսի 1-ի պայմանագրից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության մասնակցությամբ այլ միջազգային պայմանագրերից և արտահանման վերահսկման բազմակողմ պայմանավորվածություններից:

2. Սույն Համաձայնագրի համաձայն Հայաստանի Հանրապետության ստացած միջուկային նյութերը, սարքավորումները, ոչ միջուկային հատուկ նյութերը և համապատասխան տեխնոլոգիաները, ինչպես նաև դրանց հիման վրա կամ դրանց օգտագործման արդյունքում արտադրված միջուկային նյութերը, սարքավորումները, ոչ միջուկային հատուկ նյութերը և համապատասխան տեխնոլոգիաները՝

չեն օգտագործվում միջուկային զենքի, այլ միջուկային պայթուցիկ սարքավորումների արտադրության կամ որևէ այլ ռազմական նպատակով.

գտնվում են Ատոմային էներգիայի միջազգային գործակալության երաշխիքների ներքո, «Հայաստանի Հանրապետության և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության միջև միջուկային զենքի չտարածման պայմանագրի երաշխիքների կիրառման մասին» 1993 թվականի սեպտեմբերի 30-ի համաձայնագրին (INFCIRC/455) համապատասխան, Հայաստանի Հանրապետության տարածքում կամ նրա իրավազորության տակ փաստացի գտնվելու ամբողջ ժամանակահատվածում.

ապահովված են ֆիզիկական պաշտպանության այնպիսի միջոցներով, որոնց մակարդակը ցածր չէ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության՝ «Միջուկային նյութերի և միջուկային տեղակայանքների ֆիզիկական պաշտպանություն» INFCIRC /225 /Rev.4 փաստաթղթով երաշխավորվող մակարդակից.

վերարտահանվում են կամ Հայաստանի Հանրապետության իրավազորությունից փոխանցվում են ցանկացած այլ երկիր միայն սույն հոդվածում բերված պայմաններով և հանդիսանում են Ատոմային էներգիայի միջազգային գործակալության երաշխիքների առարկա այնքանով, որքանով դա իրականանալի է երաշխիքների մասին համապատասխան համաձայնագրերի շրջանակներում:

3. Սույն Համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը փոխանցվող միջուկային նյութերը չեն հարստացվում մինչև 20% և ավելի՝ ուրան-235 իզոտոպի համար, ինչպես նաև չեն հարստացվում և վերամշակվում՝ առանց Ռուսաստանի Դաշնության նախնական գրավոր համաձայնության:

4. Սույն Համաձայնագրի համաձայն Ռուսաստանի Դաշնությունից ստացված՝ միջուկային նպատակներով կիրառվող՝ երկակի նշանակության սարքավորումները և նյութերը, համապատասխան տեխնոլոգիաները և նրանց ցանկացած վերարտադրված կրկնօրինակները՝

օգտագործվում են միայն հայտարարված նպատակներով, որոնք կապված չեն միջուկային պայթուցիկ սարքավորումների ստեղծման գործունեության հետ.

չեն օգտագործվում միջուկային վառելիքային ցիկլի բնագավառում այն գործունեության իրականացման համար, որոնք չեն գտնվում Ատոմային էներգիայի միջազգային գործակալության երաշխիքների ներքո.

չեն կրկնօրինակվում, վերափոխվում, վերաարտահանվում կամ փոխանցվում որևէ մեկին՝ առանց Ռուսական կողմի իրավասու մարմնի գրավոր թույլտվության՝ համաձայնեցված Ռուսաստանի Դաշնության տեխնիկական և արտահանման վերահսկման դաշնային ծառայության հետ:

5. Կողմերը համագործակցում են միջուկային նյութերի, սարքավորումների, ոչ միջուկային հատուկ նյութերի և համապատասխան տեխնոլոգիաների արտահանման վերահսկման հարցերով:

Հոդված 10

Միջուկային վնասի համար քաղաքացիական պատասխանատվությունը, որը կարող է առաջանալ սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցության հետ կապված, Կողմերը կարգավորում են «Միջուկային վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին» 1963 թվականի մայիսի 21-ի Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերի՝ միջուկային անվտանգության ոլորտում հսկողություն (վերահսկողություն) իրականացնող՝ կարգավորող մարմինների, ինչպես նաև դրանց գիտատեխնիկական աջակցությունն ապահովող կազմակերպությունների կողմից համագործակցություն է

իրականացվում լիցենզավորման և միջուկային ու ճառագայթային անվտանգության հարցերով:

Հոդված 12

1. Կողմերի միջև սույն Համաձայնագրի կիրառման և/կամ մեկնաբանման հետ կապված վեճերը կարգավորվում են Կողմերի իրավասու մարմինների միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով, եթե Կողմերն այլ կերպ չեն պայմանավորվում:
2. Անհրաժեշտության դեպքում Կողմերի իրավասու մարմինները, նրանցից մեկի առաջարկությամբ, հանդիպումներ են անցկացնում սույն Համաձայնագրի կատարումն ապահովող առաջարկությունների քննարկման համար:

Հոդված 13

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերից որևէ մեկի՝ այլ միջազգային պայմանագրերով նախատեսված իրավունքները և պարտավորությունները, որոնց մասնակից են Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը:

Հոդված 14

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումն ստանալու պահից:
2. Սույն Համաձայնագիրն անժամկետ է:
3. Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը մյուս Կողմին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է այդպիսի ծանուցումն ստանալուց մեկ տարի անց:
4. Կողմերից մեկի կողմից սույն Համաձայնագրի դադարեցման վերաբերյալ մյուս Կողմի ծանուցումն ստանալուց հետո Կողմերն անհապաղ անցկացնում են խորհրդակցություններ սույն Համաձայնագրով ստանձնած բոլոր պարտավորությունների կատարման հնարավորության վերաբերյալ:
5. Սույն Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում 6-10-րդ հոդվածներով նախատեսված պարտավորությունները մնում են ուժի մեջ:

Կատարված է Երևան քաղաքում 2010 թվականի օգոստոսի 20-ին, երկու օրինակով, հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2010 թ. դեկտեմբերի 27-ին